**Անի Ժիրայրի Չատինյան**

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավական բաժնի համակարգող

Մասնագիտությամբ իրավաբան, փաստաբանի որակավորում

Ա. Չատինյանը ՀՔԱՎ-ում աշխատում է 2010 թվականից

Անի Չատինյանը 2018 թվականին ընդգրկված է եղել ՀՀ ոստիկանության բարեփոխումները համակագող խորհուրդի կազմում:

Անի Չատինյանը շուրջ 15 տարի աշխատելով Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ հասարակական կազմակերպությունում, իր անմիջական ներգրավվածությունն է ունեցել կազմակերպության ռազմավարության մշակմանն ու ռազմավարական նպատակների շրջանակներում իրականացրել մարդու իրավունքների պաշտպանություն՝ կազմակերպություն դիմած հարյուրավոր շահառուների համար՝ ինչպես ՀՀ ներպետական դատական ատյաններում, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, այնպես էլ բազմաթիվ գործերով ներկայացնելով քաղաքացիների իրավունքները Մարդու իրավունքների եվրոպական դատարանում: Հեղինակ է առնվազն 250 անհատական գանգատների Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, որոնցից այս պահին առնվազն 20 գտնվում են կոմունիկացիայի փուլում: